Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1107-23.03.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն) (այսուհետ՝ Օրենսգիրք) 72-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «,սույն հոդվածի առաջին մասով նախատեսված պայմանների առկայության դեպքում,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5. Սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ, 205-րդ եւ 206-րդ հոդվածներով նախատեսված արարքներն կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը եւ հաշվարկված տույժերն ու տուգանքները»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: